№ 196 Հոկտեմբերի 22 (Նոյեմբերի 3) 1881 Հոկտեմբերի 22 (Նոյեմբերի 3) № 196

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ոտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Մի նոր գիրք։ Նամակ Շուշուց։ Նամակ Շամախուց։ Նամակ Խըմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայոց խնդիր։ «Порядокъ» լրագրի թղթակցութիւն։ Պրտաքին լուրեր։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մի ՆՈՐ ԳԻՐՔ

Այս օրերս հրատարակվեցաւ մի նոր գիրք „Անահիտ", գործ. Ղ. Աղայեանցի։

Այդ դողորիկ վէպիկի նիւթը վերցրած է Աղուանական կեանքից և հիմնված է գլխաւորապէս առասպելախառն զրոյցների վրա, որոնք մինչև այսօր աւանդաբար տակաւին պատում են ժողովրդի բերանում։

Վէպի գլուխգործուհին հրաշագեղ Անահիտն է, այդ գիւղական նախորդի անվեհեր, իմաստուն և թովիչ աղջիկը, որի գեղեցիկ սկզբունքի շնորհիւ (թագաւո՛ր թէ գեղջուկ՝ արհեստագէտ լինելու է) լուծվում է Վաչագան թագաւորի անելանելի տարտարոսից ազատութեան անլուծանելի կնճիռը։

Ամենամեծ հաճութեամբ, աննկատելի կերպով աւարտեցի յիշեալ գրքոյկի ընթերցանութիւնը. լեզուն սահուն և կենդանի է, նիւթը ժողովրդական, գրաւիչ։

„Անահիտը" պատանեկական վառ երևակայութեան համար՝ մի քաղցրահամ բաժին է, որը ճաշակելով՝ կը բացվի պատանու ախորժակի անյատակ խորութիւնը և նա կը զգայ իր մէջ մի բուռն ձգտում, մի անզուսպ պահանջ միշտ այդպիսի խորտիկները ուտելու իր անպաճոյճ սեղանի վրա։

„Անահիտը" մեր արդի գրականութեան վիպական մասի լաւ զարդերից մէկն է։

Բայց ցաւալի է շատ, որ դարևոր հնութեան փոշիների տակից այդ տեսակ աշխատանքներ լոյս աշխարհ հանողը և դորա նմանները՝ մեզանում չեն գտնում ըստ արժանոյն բարոյական և նիւթական քաջալերութիւն, որով նրանք առօրեայ կեանքի ծանր պայմանների տակ ընկճվելով՝ հարկադրվում են ակամայ հրաժարվել իրանց կոչմանը ծառայելուց և իսպառ ձեռնթափ լինել գործից ի մեծ կորուստ մեր նոր գրականութեան։

Խորհուրդ կը տայի ամեն մի հոյի, ծերից սկսած մինչև պատանին, կարդալ, անպատճառ կարդալ „Անահիտը"։

Դ. Քալանթարեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Հոկտեմբերի 12-ին

Դեռահաս աղջկերանց պակեալը— հասարակ ախտ է իւրաքանչիւր հայ քաղաքում, բայց Ղարաբաղում և մանաւանդ Շուշի քաղաքի մէջ նա հասել է մի զարհուրելի աստիճանի։ Անտարակոյս, այս տխուր երևոյթը ամեն երկրում կայ, բայց մեր մէջ հասել է մի անխիղճ, զզուելի դրութեան։ Օրէնքը Անդրկովկասում թոյլ է տալիս օրիորդներին ամուսնանալ մինչև տասներեք (13) տարեկան հասակը, մինչդեռ ամբողջ Ռուսաստանում անկարելի է պսակել այդ փոքր հասակում։ Ի հարկէ, օրէնքը ի նկատի է ունեցել մեր կլիմային, որը իբր թէ աւելի տաք է, քան թէ հիւսիսում, մինչդեռ հարցը այդպէս ընդհանրացնել անկարելի է, պատճառ. օրինակ Թիֆլիսի կլիման անհամեմատ տաք է, քան թէ Շուշուն. այստեղ ձմեռը ցուրտը հասնում է մինչև —15°, միջին թւով համարեա—7°,—8°, իսկ ամառը չարունակվում է երեք ամիս, ամենաբարձր ջերմութիւնը հասնում է 18,20°, մնացած ժամանակը ցուրտ է լինում. կարելի է առանց սխալմունքի ասել, որ ձմեռը չարունակվում է վեց, եօթ ամիս. այժմ հոկտեմբեր ամսին տներում ստիպված պէտք է փայտ վառել։

Շուշին մօտ (5000) հինգ հազար ոտնաչափ բարձրութիւն ունի ծովի մակերևոյթից, շրջապատած է անտառներով, ձիւնով ծածկված լեռներով և հետևաբար աւելի մօտիկ է Ռուսաստանին, հիւսիսին, քան թէ հարաւին։ Բացի դորանից, կայ մի ուրիշ հանգամանք, որը համարեա հաւասար է կլիմային, դա է հասարակական կեանքը։ Որքան մանուկը յաճախ շարժվի հասարակութեան մէջ, այնքան նորա մէջ վաղ պէտք է զարթնեն ու զարգանան այն ձգտումները, ցանկութիւնները, որոնք յատուկ են նրա բնութեան։ Բայց ինչպէս յայտնի է, Շուշու մէջ, իբրև մի անկիրթ ասիական քաղաքում օրիորդը բոլորովին զուրկ է հասարակական կեանքից, մինչև անգամ ամուսնացած կինը խիստ բռնութեան տակ է և փակ կեանքից դուրս գալ չէ կարող։ Ուրեմն՝ ոչ կլիման և ոչ հասարակական կեանքը չեն կարող չափահասացնել օրիորդին 13 տարեկան հասակում։ Եւ ճշմարիտ, համարեա միշտ ամուսնացող օրիորդները դեռահաս մանուկներ են, որոնք երեխաների պէս չարչարվում, տանջվում են իրանց կոպիտ, անխիղճ 30, 35 տարեկան ամուսինների ձեռին։ Ցայտնի բան է, որ մարդս ամուսնանում է իր ցեղը, սեռը պահպանելու համար, այսինքն, որդիք ունենալու, նրանց կեանքի համար պատրաստելու, վերջապէս իր կեանքին և աշխատանքին ընկեր գտնելու համար։ Նոքա միանում են նոր սերունդ պատրաստելու, մէկ մէկու օգնելու, մէկ մէկու հետ տխուր ու քաղցր տպաւորութիւնները բաժանելու, քրտինք ու արտասունք սրբելու համար։ Ուրեմն երկուսն էլ պէտք է գոնէ հասած լինեն այն հասակին, երբ մարդս զգում է այդ կարիքը, երբ նա ցանկանում է, կարող է ֆիզիկապէս կատարել այդ պաշտօնը։ Չենք խօսում ազատ ընտրութեան, սիրոյ, համակրութեան, «երկու կողմի համաձայնութեան» վրա, որը մինչև այժմս մեր մէջ terra incognita է և մինչև անգամ անբարոյականութեան «լրբութեան» նշան։

Ի՞նչ է սորա պատճառը։ Կարծեմ, ոչ մի երկրում, ոչ մի քաղաքի օրիորդը, կինը այնքան վայրենի, անխիղճ ճնշողութեան մէջ, ծանր լծի տակ չէ, ինչպէս Ղարաբաղում։ Այստեղ աղջիկ ունենալը մի զարհուրելի դժբաղդութիւն է։ Ընթերցող, կը հաւատաք, որ երբէմն ծնող մայրը պատրաստ է անասնաբար խեղդել իր նորածին աղջկան, եթէ նա երկիւղ չը քաշէ Աստուածանից։ Արդեօք այս ինչ երևոյթ է։ Միթէ ղարաբաղցի կինը զուրկ է մայրական զգացմունքներից, որոնք յատուկ են բոլոր կենդանիներին։ Ոչ, դրա պատճառն է տղամարդը, այդ արենարբու պարսիկների մտրակի տակ մեծացած տղամարդը, որի կոպտութիւնը, քարէ սիրտը, երկաթի կամքը հռչակվել են շատ տեղեր։ Այո, այդ յատկութիւնները երբեմն լաւ հետևանքներ են տալիս, երբ ուրիշ բարենպատակ ուղղութիւն են ստանում, բայց ընտանեկան կեանքում նրան չինում են մի անխիղճ «փաշայ», բռնակալ իր թոյլ և քնքոյշ հպատակներին տանջելու, արիւն արտասունք թափելու համար։ Վայ այն կնոջ, որը աղջիկ-մանուկ ծնեց, ամեն օր, ամեն գիշեր նրա երեսը «թուք ու մուր» պէտք է գայ, նա դրանով տասը աստիճան ցածրանում է իր բռնակալի աչքին. նա ցուրից չը պիտի կոչէ, վասն զի մխիթարութեան տեղ պէտք է անտանելի յիշոցներ լսէ։ Շատ անգամ ես ինձ տուել եմ այս հարցը. միթէ ղարաբաղցու ուղեղը մի այնպիսի կազմուածք ունի, որ չափահաս դառած ժամանակը պէտք է բոլորովին զուրկ մնայ մարդասիրական զգացմունքներից, գոնէ ընտանեկան կեանքում։ Ի հարկէ, մենք չենք խօսում մի քանի պարոնների մասին, որոնք «եարմուկայ», Մոսկվայ, Մարսէլիա են գնացել և սովորել աւելի լուսաւոր կերպիւ բռնակալութիւն անել, այլ «ասլը ղարաբաղցոց վրա»։ Այդ վայրենութիւնը, կոպտութիւնը կարելի է տեսնել ամեն ազգի ռամիկ, ստրկութիւն ծծած ժողովրդի մէջ. օրինակ, ռուս գիւղացին էլ չէ խնայում իր կընոջը՝ ծեծել, չարչարել նրա համար բնական կարիք է, որովհետև նրան էլ չեն խնայում, նրա կեանքի ճանապարհն էլ չէ վարդով փռած, բայց ռուսի և ղարաբաղցւոց ծեծի մէջ մեծ զանազանութիւն կայ։ Ռուս ռամիկը այնքան մեղմ բընութիւն ունի, որ ծեծից յետոյ համբուրում է իր կնոջը. միասին արտասվում, ներողութիւն խնդրում վերջը, բայց ղարաբաղցին չարաթներով չարունակում է իր անասնական յիշոցները, խռովութիւնը, բարկացած, զզուելի դէմքը. նրա տուն վերադառնալը շատ անգամ ահ ու դող է ձգում խեղճ կնոջ և քնքոյշ մանուկների սիրտը։ Կան ղարաբաղցիք, որոնք ամիսներով խռով են իրանց կնոջ յետ մի չնչին պատճառով. կան հայրեր, որոնք իրանց ութ, տաս տարեկան աղջկերանց մի անգամ էլ համբուրած չեն։ Ես մինչև 20 տեղ լսած եմ, ինչպէս նորածին աղջկանը առաջին աղաղակին գոռած են «զահրումար» մանկաբարձից սկսած մինչև մանկան հայրը։ «Զո՛ռ, ըլած օրդ սև ընի» ահա խեղճ երեխայի առաջին լսած խօսքերը։ Հասակը առած օրիորդը այստեղ մի խաղալիք է, անասնական ցանկութիւնների առարկայ, ստրուկ և հետևաբար ծընողները ջանք են անում նրան, որքան կարելի է, «չուտ գլխներից ազատ» անեն, իսկ վայրենի ամուսինը—որքան կարելի է, քնքոյշ հասակի, մատաղահաս խաղալիք գտնէ իր անասնականութեան համար։ Սրա հետևանքը լինում է այն, որ գեղեցիկ կարմիր վարդերը թառամում են ամուսնութեան առաջին կամ երկրորդ տարում, որ ցեղը մանրանում, փչանում է։ Ահա գլխաւոր պատճառը այն տխուր երևոյթի, որ ղարաբաղցի տղամարդը երկաթի պէս մարմին ունի, վարդի պէս փռված է, իսկ կին-մարդը նիհար, գունատ, «սիրտը թռթռալիս», որովհետև նրա համար իւրաքանչիւր ծնունդը մահից ազատվել է։ Այս հարցի վրա դարձնում ենք մեր Վեհափառ Հայրապետի լուրջ ուշադրութիւնը, որովհետև Շուշու 13 տարեկան օրիորդը հաւասար է Թիֆլիսի 8, 9 տարեկանին, բայց դրանից օրէնքով դրված 13 տարուց ղարաբաղցիք չարչիութիւնով երբեմն մէկ, երկու տարի էլ են պակասացնում, այնպէս որ 11, 12 տարեկան աղջիկ պակելը մի հասարակ երևոյթ է և նմանապէս նրանց մեռնելը ծննդեան ժամանակ արիւնահոսութիւնից, պատճառ օրիորդի կազմուածքը դեռ պատրաստ չէ լինում այդ հասակում ծննդեան համար։ Ցեղը փչանում է, դա մարդասպանութիւն է. ժամանակ է ուշադրութիւն դարձնել այդ կենսական ծանր հարցի վրա։

Բժիշկ Մ. Առստամեանց

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Հոկտեմբերի 1-ին

Երբ հասայ Շամախի, իմ առաջին մտադրութիւնը հայոց թեմական դպրոցը տեսնելն էր։ Ներս մտայ մի դասարան։ Դասատուութիւնը հայոց լեզու էր, որը աւանդում էր պ. Ա. Եգանեանց անունով մի շամախեցի ուսուցիչ Երուսաղէմի ժառանգաւորաց դպրոցի աշակերտ։ Երբ ներս մտայ, ոչ մի աշակերտից բարև չընդունեցի իմ ողջունելուս փոխարէն. նոյն իսկ ուսուցիչը մի պաղ կերպով ինձ ողջունելուց յետոյ, սկսեց շարունակել իր դասատուութիւնը աշակերտաց աղմկի մէջ, բայց ես նկատում էի, որ ամեն մէկը զբաղված է մի ուրիշ բանով և ուսուցչի դասատուութեանը չէ հետևում։ Թողնելով ուսուցչին իր դրութեան մէջ, անցայ միւս դասարանը։ Այստեղ պարապում էր պ. Ա. Ադամեանցը. նրա դասատուութիւնը ռուսաց լեզու էր. սա պարապում էր ինչպէս մի իսկ ուսուցիչ, որ հասկանում է իր պարտաւորութեան նշանակութիւնը և աշակերտներն ևս մեծ ուշադրութեամբ լսում էին նրան, որովհետև ուսուցչի հմտութիւնից, աշակերտների համար դասատուութիւնը մի պարզ և զուարճալի խօսակցութիւն էր թվում, և ահա սրանից է որ աշակերտները ռուսերէնը հայերէնից էլ լաւ են կարդում. նոյն իսկ ես չը կարողացայ զսպել իմ ուրախութիւնս և շնորհակալութիւն յայտնեցի մանկավարժ ուսուցչին։ Ռուսումնարանը բաղկացած է չորս բաժանմունքից, որոնց նախակրթարանում պարապում է ուսուցիչ և միանգամայն տեսուչ՝ պ. Ա. Գալստեանցը. ես նրան ճանաչեցի որպէս փարձառու, ազնուասիրտ և կրթեալ. նա աշխատում է նոր աշակերտների մէջ ուսման արմատը լաւ ամրացնել։

Ուսուցիչները բոլորն էլ ազնիւ երիտասարդներ են, բայց պ. Ա. Եգանեանցը չափից դուրս բարեսիրտ է և աշակերտները չեն լսում նրան. այդպիսով նա իր ազդեցութիւնը աշակերտների վրա արդէն կորցրել է։ Պէտք է յիշեմ այստեղ և կրօնագիտութեան ուսուցչին. նա շատ յաճախ բացակայ է գտնվում դասերից, իսկ եղած ժամանակն էլ շատ քիչ բան է սովորեցնում և դաս աւանդելու կերպը չը գիտէ։

Ցանկալի էր որ աւելի երկար խօսէի փոքր ինչ ևս օրիորդական դպրոցի մասին, բայց որ կողմն որ դառնում եմ, ամեն ցաւալի դէպքերն միաւորելով ևս կարելի է մի լակոնական կերպով յայտնել, որ նա խեղճ դրութեան մէջ է։

Ցայոց դպրոցին կից գտնվում է ազգային ընթերցարանը, ուր երկու հազար կտորից աւելի գրքեր կան, թէ ռուսերէն և թէ հայերէն լեզուով։ Այցելելով մի կիրակի օր ընթերցարանին, ես ցանկացայ նոր լրագիրներ տեսնել, բայց փոխ-գրապահը ասաց որ, չը գիտեմ թէ ում մօտն է. այս բանը ինձ զարմացրեց և ես իմացայ, որ լրագիրները հնանալուց և ձեռք ձեռք պտտելուց յետոյ են մտնում դրադարանը....

Մի քանի օր մնալով Շամախում, այցելեցի թեմական առաջնորդին, յուսալով որ այստեղ փոքր ինչ ուրախալի բաներ կը լսեմ, բայց սրբազանը բացի գանգատներից ուրիշ ոչինչ չունէր ասելու. նա չարունակ պարսաւում էր իր հակառակ կուսակցութեանը և իր խօսքերից յայտնվեց որ ինքն էլ, մեր այժմեան շատ հոգևորականների նման, սիրում է հանգիստ ապրել։ Իսկ «գործել» բառը նա սաստիկ ատում է, միայն սիրելի է նրան խորհուրդ տալ այն բանի մասին, որը ինքը հոտը չէ առել. բայց մի բան որ ինձ աւելի զարմացրեց նա է՝ որ կարծես թէ այդ հոգևորականը իր օգնական վարդապետի ստորադրեալն է, որովհետև նրա թելադրութեամբ է միշտ խօսում։

Ցաւալի է ճշմարիտ թեմի վիճակաւորի այս թոյլ ընթացքը, ուսումնարանի և եկեղեցու անկարգ դրութիւնը և նամանաւանդ Շամախու երկմաս կուսակցութեանց միմեանց հակառակ ընթացքը։ — Այս բոլոր ցաւալի դէպքերը կարող է կարգի դնել նոյն ինքն թեմի վիճակաւոր առաջնորդը, եթէ լինի նա իր պարտաւորութիւնը հասկացող հոգևորական։

Ա.